ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

Ք. Եղեգնաձոր

N 2

«29» հունվարի 2010թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 7-րդ, 8-րդ հոդվածների, ՀՀ Նախագահի 2007 թ. հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը հաստատելու մասին» Ն Հ-174-Ն հրամանագրի 18-րդ, 19-րդ և 108-րդ կետերի պահանջներով և նպատակ ունենալով՝ մարզպետարանի աշխատակազմին տեղեկություն ստանալու նպատակով հասցեագրված գրավոր և բանավոր հարցումներին ի պատասխան՝ տեղեկություն տրամադրելու կարգը համապատասխանեցնելու 2003թ. սեպտեմբերի 11-ի «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 72-Ն որոշմանը

Որոշում եմ՝

1. Մարզպետարանի աշխատակազմին հասցեագրված գրավոր և բանավոր հարցումների հիման վրա օրենքով սահմանված կարգով տրամադրել տեղեկություն, եթե դրանք մարզպետարանի կայք էջում տեղակայված չեն:
2. Մերժել տեղեկության տրամադրումը, եթե այն պարունակում է ՀՀ պետական, ծառայողական, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ, որոնք հրապարակման ենթակա չեն:
3. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջին համաձայն, մարզպետարանի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու նշանակել աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս. Մարգարյանին:

Վ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ